

Ղաուազեան Կ. – Փարիզ – Արվեստի աշխարհ. Հայրենի գեղանկարիչ Արամ
Իսաբեկյանի նոր ցուցահանդեսի առթիվ – թերթ, «Կամք», 12.12.1997

Կրկին հանդիպեցինք Արամ Իսաբեկյանին՝ Փարիզի Cite' des Arts-ի սրահներում: Այս անգամ կենտրոնի վեցերորդ սրահը տրամադրված էր հայ նկարչին, Փարիզ՝ իր նախորդ այցելության ընթացքում կատարած ստեղծագործությունների ցուցադրման համար: Վեց յուղաներկ և երկու տասնյակի հասնող գրաֆիկական աշխատանքները նոր լույս են սփռում Արամ Իսաբեկյանի նկարչության վրա:

Ինչպես արվեստագետն է նշում, ընդհանուր առմամբ ունենալով տխուր տրամադրությունների հակում, կարծեք այս անգամ իրականությունը դիտել է ավելի պայծառ ու լավատես հայացքով: Փարիզում անցկացված չորս ամիսները արվեստագետին առիթ են ընծայել այլ մոտեցում ունենալ իր արծարծած «նյութերի» նկատմամբ, աշխարհը և կյանքը դիտելով ուրիշ տեսանկյունից:

Արամ Իսաբեկյանի վերջին այս աշխատանքերում գունեղանքները թվում է, թե նոր իմաստ ու նշանակություն են դրսևորում և իրենց ազդեցությամբ և արտահայտչամիջոցներով թափանցում են մարդու հոգեվիճակների խորը ծալքերը... Հեղինակը հաջողել է այս բոլորը ի մի բերել՝ կյանք տալով «անշունչ» կտավներին: Գեղանկարիչ արվեստագետի այս գործերը ներկայացնում են նրա կյանքի «թաքնված» ոլորտներն ու մտահորիզոնները, որոնք անկախ նկարչի այս կամ այն տրամադրությունից, իրենց «ասելիքը» ունեն ակնդիրին:

Արամ Իսաբեկյանը ծնվել է և իր բարձրագույն կրթությունը ստացել է Երևանում: Այժմ իր իսկ ուսանած Երևանի գեղարվեստական պետական հիմնարկի տնօրենն է: Նա Հայաստանի նկարիչների միության անդամ է, մասնակցել է բազմաթիվ հանրապետական, համամիութենական ու արտասահմանյան ցուցահանդեսների: Նրա գործերին ծանոթանալու և գնահատելու առիթ ունեցել են Սիրիայի, Շվեյցարիայի, Հունգարիայի, Բուլղարիայի, Հնդկաստանի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և այլ հայաշատ գաղութների արվեստասերները: Իսկ 1995-ին, Փարիզի Cite' des Arts-ում տեղի է ունեցել նրա ջրաներկ ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը:

Փարիզյան իր գործերի ցուցադրության առիթով Արամ Իսաբեկյանը մեծ ուրախությամբ հայտնեց, թե վերջերս Գյումրիում իր դռները բացել է արվեստի նոր օրրան՝ Երևանի կոնսերվատորիայի, թատերական և գեղարվեստական հիմնարկների մասնաճյուղը, որ իրապես մեծ նվեր է Գյումրիի նման արվեստագետներ ծնող քաղաքի համար: Երկրաշարժի ցավերից տակավին չապաքինված ու բնության ահավոր աղետի հետքերով «ապրող» քաղաքի նոր հասակ ստացող սերնդի համար այս հաստատությունը մեծ նշանակություն պիտի ունենա, որովհետև Գյումրին հանրապետության մեջ ծանոթ է իր բարձր մակարդակ ունեցող մասնագետներով:

Արամ Իսաբեկյանի ցուցահանդեսը կարելի է վայելել՝ այցելելով Cité des Arts-ի
վեցերոորդ սրահը:

Կարինե Ղաուազեան